Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի << Տալվորիկի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականություն (22 դասաժամ), ռուսաց լեզու (16 դասաժամ), անգլերեն (12 դասաժամ), ֆիզկուլտուրա (11 դասաժամ), պատմություն (13 դասաժամ), հասարակագիտություն (2 դասաժամ), երաժշտություն (4 դասաժամ), կերպարվեստ (4 դասաժամ), տեխնոլոգիա (5 դասաժամ), ՆԶՊ (1 դասաժամ, 0,5 դրույք զինղեկ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկան են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 12-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Արմավիրի մարզի << Տալվորիկի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում.հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Տալվորիկ, Անդրանիկի 27 :

Տեղեկությունների համար զանգահարել (094) 159132 հեռախոսահամարով:

<< Տալվորիկի հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենություն